

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն № 1 0
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի
2018թ սեպտեմբերի 28-ին կայացած նիստի

Նախագահությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի
Քարտուղարությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի
Մասնակցությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի անդամների (ներկայության թերթիկը կցվում է)

Օրակարգ՝

1. Գիտական խորհրդի կազմի հաստատում
Զեկուցող՝ Ա.Լոքյան
2. Գիտական խորհրդի 2018-2019 ուսումնական տարվա աշխատանքային պլանի քննարկում և
հաստատում
Զեկուցող՝ Ա.Լոքյան
3. Մագիստրատուրայի առկա և հեռավար ուսուցման 2018-2019 ուսումնական տարվա
ընդունելության արդյունքների ամփոփում
Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան
4. Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի
ասպիրանտ Մարինե Ռազմիկի Մովսիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի
հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Մ.Մարգարյան

1.Լսեցին՝ Գիտական խորհրդի կազմի հաստատման հարցը:
Զեկուցող՝ Ա.Լոքյան

Զեկուցողը նշեց, որ գիտական խորհրդի որոշ ուսանող անդամներ ավարտել են Ակադեմիան, փոխվել է արհեստակցական կազմակերպության նախագահը, ով ի պաշտոնե գիտական խորհրդի անդամ է, ուստի անհրաժեշտություն է առաջացել վերանայել գիտական խորհրդի կազմը: Ուսանողական խորհուրդը ներկայացրել է համապատասխան անդամների ցանկը, ուստի առաջակում եմ հաստատել գիտական խորհրդի հետևյալ կազմը՝

1. **Արսեն Լոքյան**
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր, գիտական խորհրդի նախագահ, հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
2. **Հասմիկ Ստեփանյան**
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար, գիտական խորհրդի նիստի քարտուղար, իրավ.գիտ. թեկնածու, դոցենտ
3. **Ամայա Մարիբեկյան**
Լիազոր մարմնի ներկայացուցիչ, տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր
4. **Թերեզա Խեչոյան**
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի արտաքին կապերի գծով պրոռեկտոր
5. **Գոռ Չատինյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտաուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

6. Խաչատուր Բեգիրջյան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի լրացուցիչ և շարունակական կրթության գծով պրոռեկտոր, կենսաբանական գիտությունների թեկնածու

7. Գորիուն Ադամյան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու

8. Լուսինե Զիլֆուղարյան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ուսումնամեթոդական վարչության պետ

9. Մարիամ Մարգարյան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի վարիչ, քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր

10. Ռուբեն Աղուզումցյան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

11. Արմենակ Այվազյան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու

12. Վիլեն Խաչատրյան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

13. Արմեն Եզեկյան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի վարիչ, իրավագիտության թեկնածու, դոցենտ

14. Նաիրա Ղազարյան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրայի բաժնի պետ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու

15. Ավետիս Գևորգյան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի պետ, տնտեսագիտության թեկնածու

16. Արտակ Բաղդասարյան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի վերապատրաստման և որակավորման բարձրացման բաժնի պետ, քաղաքագիտության թեկնածու

17. Գայանե Հովհաննիսյան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավախորհրդատու

18. Հասմիկ Նավասարդյան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի արհեստակցական կազմակերպության նախագահ

19. Անահիտ Հարությունյան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ուսանողական խորհրդի նախագահ, քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի առկա ուսուցման 1723 թողարկման մագիստրանտ

20. Մանե Սավթայան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Կառավարման ամբիոնի առկա ուսուցման 1723 թողարկման մագիստրանտ

21. Միփան Կեսոյան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Իրավագիտության ամբիոնի առկա ուսուցման 1824 թողարկման մագիստրանտ

22. Թագուհի Օատինյան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Կառավարման հոգեբանության ամբիոնի առկա ուսուցման 1723 թողարկման մագիստրանտ

23. Մելանյա Մանուկյան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Կառավարման ամբիոնի առկա ուսուցման 1824 թողարկման մագիստրանտ

24. Նանե Զեյնայան

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Կառավարման հոգեբանության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Ն.Ղազարյանը, Գ.Հովհաննիսյանը:

Որոշեցին՝ Հաստատել գիտական խորհրդի ներկայացված կազմը:

2. **Լսեցին՝** Գիտական խորհրդի 2018-2019 ուսումնական տարվա աշխատանքային պլանի քննարկման և հաստատման հարցը:

Զեկուցող՝ Ա.Լոքյան

Զեկուցողը ներկայացրեց գիտական խորհրդի 2018-2019 ուսումնական տարվա աշխատանքային պլանը

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Ռ.Աղուզումցյանը, Խ.Բեգիրջյանը:

Որոշեցին՝ Հաստատել գիտական խորհրդի 2018-2019 ուսումնական տարվա աշխատանքային պլանը (կից ներկայացվում է նախագիծը)

3. **Լսեցին՝** Մագիստրատուրայի առկա և հեռավար ուսուցման 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների ամփոփման հարցը:

Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան

Զեկուցողը ներկայացրեց, որ 2018-2019 ուսումնական տարվա մագիստրատուրայի առկա ուսուցման ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա Ակադեմիա են ընդունվել 137-ը, ընդ որում՝ հանրային կառավարում՝ 27 հոգի (անվճար՝ 10, վճարովի՝ 17), հանրային ֆինանսների կառավարում՝ 14 հոգի (անվճար՝ 7, վճարովի՝ 7), գործարար վարչարարություն՝ 26 (անվճար՝ 0, վճարովի՝ 26), իրավագիտություն՝ 25 հոգի (անվճար՝ 12, վճարովի՝ 13), կառավարման հոգեբանություն՝ 14 հոգի (անվճար՝ 4, վճարովի՝ 10), քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն՝ 10 հոգի (անվճար՝ 3, վճարովի՝ 7), գլոբալ կառավարում և տարածաշրջանային քաղաքականություն՝ 10 հոգի (անվճար՝ 3, վճարովի՝ 7), քաղաքական ժուռնալիստիկա և PR տեխնոլոգիաներ՝ 11 հոգի (անվճար՝ 3, վճարովի՝ 8): Հեռավար ուսուցմամբ «Գործարար վարչարարություն» կրթական ծրագրով ընդունվել են 21 հոգի:

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Վ.Խաչատրյանը, Մ. Մարգարյան:

Որոշեցին՝ Մազիստրատուրայի առկա և հեռավար ուսուցման 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության արդյունքներն ընդունել ի գիտություն:

4. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի ասպիրանտ Մարինե Ռազմիկի Մովսիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

2. Ձեկուցող՝ ամբիոնի վարիչ Մ.Մարգարյան:

Ձեկուցողը նշեց, որ Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնում 24.09.2018թ. կայացած ամբիոնի նիստում քննարկվել է ամբիոնի ասպիրանտ Մարինե Ռազմիկի Մովսիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը և ամբիոնի նիստում կայացրած որոշմամբ միջնորդում են գիտական խորհրդին Մարինե Ռազմիկի Մովսիսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել ««Թավշյա հեղափոխությունը» որպես Հայաստանի Հանրապետությունում քաղաքական փոփոխության գործընթաց. Սոցիալական ցանցեր» վերտառությամբ՝ ԻԳ.00.02.- «Քաղաքական գործընթացներ և ինստիտուտներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր Մարիամ Մարգարյանին:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Մ.Մարգարյանը:

Որոշեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի ասպիրանտ Մարինե Ռազմիկի Մովսիսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել ««Թավշյա հեղափոխությունը» որպես Հայաստանի Հանրապետությունում քաղաքական փոփոխության գործընթաց. Սոցիալական ցանցեր» վերտառությամբ՝ ԻԳ.00.02.- «Քաղաքական գործընթացներ և ինստիտուտներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր Մարիամ Մարգարյանին:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան

28 սեպտեմբերի 2018թ.

Կ.Տ.